

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

(Օտարադաբացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусако“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄԱՍԿ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: Հայերը և նրանց
քաղաքական գաղափարները: Ներքին լուրերը—
Խառն լուրերը—Յայտարարութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳԱՂԱՔԱՐՈՒԹԻՒՆ

Խօսելով ճանկաստանի հայերի ձգտումների մասին, պատուելի հեղինակը շարունակում է. «Ամենից առաջ նրանք ցանկանում են ունենալ քաղաքական ինքնավարութիւն, քաղաքական վերածնելութիւն, միացնելով նրա հետ, ի հարկէ, իրանց կրօնի և աշխատանքի ապահովութիւնը: Հայոց ազգութիւնը, յոյներից յետոյ, հին աշխարհի ազգութիւններից միակն է, որ հասցրել է իրան մինչև մեր ժամանակը, ոչ միայն պահպանելով իր ամբողջութիւնը, այլ և բռնելով մի և նոյն երկիրը, որի վրա բնակվում էր նա ջրբխատնէական ժամանակներում: Հայոց ազգի պատմական հասակակիցները—ասորեստանցիք, քարեդոնացիք կապաղովկացիք, լիդիացիք, պարսերը—վաղուց անհետացել են երկրի երեսից, և շատերը մինչև անգամ մոռացվել են կենդանի մարդկութեան յիշողութիւնից: Իսկ հայերը շարունակում են ապրել Հայաստանում, մի և նոյն արևելից սեւեռով հայերը, որոնք բնակվում էին այնտեղ Աղէքսանդրի և Վերոսի ժամանակներում: Նրանց մէջ օտար արեան խառնուրդ խիստ աննշան էր և չէր կարողացաւ ոչնչացնել ազգայնութիւնը: Յոյները նոյնպէս պահպանվեցան. բայց որքան և դժուար լինէր նրանց կեցութիւնը, այսու ամենայնիւ, յոյները զրկւած էին աւելի բարեկեցիկ պայմանների մէջ, քան թէ հայերը: Բայց աշխարհագրական և ազգայնական ամբողջութիւնը, հայերը պահպանեցին նաև իրանց աւանդութիւնների ամբողջութիւնը: Հայոց թագաւորութեան ժամանակի մեծ փառքը դեռ կենդանի է մնացած նրանց յիշողութեան մէջ: Մեր ժամանակակից հայերը հաստատ գիտեն, թէ կար ժամանակ, երբ Հայաստանը էր մի հզօր թագաւորութիւն, երբ նա իր տարածութեամբ և բնակիչների թիւով հասարակում էր այժմեան Ֆրանսիային, երբ պահպանում էր նրան 120,000 զօրք, և երբ նրա զաշնակցութիւնը խնդրում էին ամենա հզօր պետութիւնները: Դա IV դարում էր: Հայկական ներկայացուցիչների փառահեղութիւնը և պնդասիրութիւնը հասնում էր մինչև առասպելաբանութեան: Հայոց իշխանները (նախարարները), ասում է Վրիգոր Վարապետը (V) իր գրութեան մէջ, շատ անգամ այցելութիւն էին գործում երբեմն Հռոմի և երբեմն պարսից արքունիքը: Պարսիկներից նրանք ընդունեցին ասորական պնդասիրութեան սովորութիւնները. նրանց հագուստը բնական էր, զարդարած զոհարներով. զէնքերը նոյնպէս զարդարած էին եաղուլթներով, այմազներով և այլ թանկագին քարերով, խնձոյքները չափազանց փառաւոր էին և կատարելապէս արևելեան շքեղութեամբ: Հռոմից նրանք սովորեցին զեղարուեստը, սովորեցին արվեստը, բայց, կասեցին պալատներ, թատրոններ, ստեղծագործում էին մարմարի օձի արձաններ,

և ընդունեցին կրօնական ծիսակատարութիւնների մեծահանգէս փառահեղութեամբ ներկայացնելը: Բարձր դասի այս տեսակ հակումը դէպի պնդասիրութիւն և զգայականութիւն, և նրա փափկասէր մեղիութիւնը չէր կարողացան թուլացնել նրանց մէջ ազգասիրութիւնը հայրենիքի համար ծանր տարիներում: Երբ V դարում Հայաստանին հասաւ պաշտպանվել պարսից Յազդեթ II-ի հալածանքներից, և երբ հայոց պետութեան զանազան վիճակի մէջ էր, այն ժամանակ ժողովրդի հարուստ դասերը զոհեցին իրանց կեանքի և կացութեան բոլոր զարդարանքները. նրանք տուեցին թագաւորութեանը ոչ միայն իրանց ամեն թանկագին բաները, այլ և նուիրեցին իրանց կալուածների խնայողութեամբ յետ ձգած եկամուտները: Այն ժամանակ բարձր դասի փափկասէր կանայքը հաճում էին որպէս հասարակ սպասուհիներ և կատարում էին տնային բոլոր ծանր աշխատութիւնները, և իրանց խնայած արծաթը նուիրում էին հայրենիքի պաշտպանութեան համար: Ոչ սակաւ փառաւոր են հայերի կրօնական աւանդութիւնները: Մենք թոյլ ենք տալիս մեզ նկատել, որ հայերը զբէթէ հռոմայեցիներից առաջ սկսեցին պաշտել զեղեցիկ վանմութիւնը. նոյն իսկ Յուդեայում ընդունեց զբացի հայերից, Անտիոքից, կրօնը—զեղեցիկ աստուածացումը: Եւ հայերի վաղմիկ հեթանոսական հաւատը կրում էր մի և նոյն բնաւորութիւնը: Նրանք պաշտում էին բնութիւնը և ինչ որ գեցիկ է բնութեան մէջ: Նրանց կրօնը, ինչպէս յոյներից, պայմանաւորվում էր գեղեցիկ գաղափարի երկրպագութեան մէջ, և նրանց կրօնական ծիսակատարութիւնները թէ չէր զուրկեան կողմից և թէ փառաւորութեան կողմից պակաս չէին մնում հին Նլադայի կրօնական հանգէտներից: Բայց այդ հեթանոսական կրօնի պայծառ փայլը, ի հարկէ, նա իմացաւ ըրիստոնէական աւանդութիւններով: Հայերը իրաւունք ունեն պարծենալով: Հայաստանը հենց Յիսուս Քրիստոսի կենդանութեան ժամանակ արամադրված էր ընդունելու նրա վարդապետութիւնը: Այն ժամանակ նա գտնւում էր Հռոմի բարձր իշխանութեան ներքոյ, և Հայոց Աբգար թագաւորը, լսելով Վաղիլիացու վարդապետութեան հուրիւնը և այն հալածանքները, որոնց նա այդ մասին եղծարկվեցաւ իր հայրենիքում, ինքը նամակ գրեց Քրիստոսին, խնդրելով, որ նա զայն Հայաստան և այնտեղ տարածէ իր ուսումը: Քրիստոսը չեկաւ. բայց սկզբում Պաղեստինում քարոզեցին Հայաստանում ըրիստոնէութիւնը, որը ընդունվեցաւ, թէ և նրա կատարելապէս հաստատվելը չէր կարող չը հանդիպել հեթանոսութեան սաստիկ մաքառմանը: Հայաստանը կարող է վիճել Հռոմի հետ, և վիճել յաջողակ կերպով, ըրիստոնէական առաջին ժամանակների աւանդութիւնների վերաբերութեամբ: Հայոց եկեղեցին թէ և IV դարում ընդունված էր պապի հովանաւորութեան ներքոյ *) բայց միշտ պահպանում էր

իր անկախութիւնը: Նա հեթանոսական ծիսակատարութիւնների շքեղ պայծառութիւնը փոխադրելով ըրիստոնէական պաշտմունքների մէջ, տուեց նրանց մի առանձին բնաւորութիւն: Հայոց եկեղեցին, չը նայելով զանազան պատերի և եպիսկոպոսաց ժողովների ծնունդներին, չը միացաւ ոչ յունական և ոչ հռոմէական եկեղեցիների հետ, և պահպանեց մինչև մեր օրերը իր առանձնութիւնը: Նա դաւանականական խնդիրներում համաձայնվելով լատինական եկեղեցու հետ (Ո), այսու ամենայնիւ, միշտ մերժել է ընդունել պապի բարձր զիսաւորութեան դաւանումը: Միայն հայերի մի աննշան թիւ—այժմեան կաթօլիկները կատարելապէս եղծարկվում են Հռոմի իշխանութեանը:

Բոլոր այդ յիշողութիւնները հայերի ազգային կեանքի ունակութեան և տոկունութեան մասին, բոլոր այդ աւանդութիւնները քաջազնական ազգի զօրութեան և պայծառափայլութեան մասին, և նրանց մատուցած ծառայութեան մասին ըրիստոնէութեանը—երբէք չեն մահացել նոյն իսկ հայկական ժողովրդի մէջ, որպէս չէ մահացել և ինքը ժողովուրդը: Բայց այդ յիշողութիւնների և աւանդութիւնների հետ միասին ապրում էր և ապրում է մինչև այժմ (տաճկական) Հայաստանի քաղաքական վերածնելութեան հաւատը: Ժողովրդի մէջ դեռ ևս պահպանւում է մի լեզուն—գայ, թէ երբ հայոց Տրդատ թագաւորը XIII դարում (?) գնաց որոնելու մեծ վերանորոգիչ Վրիգոր Լուսաւորչին, գտաւ նրան Սեպուհ կոչված սուրբ լեռան վրա: Զննաւորը նախագուշակելով յայտնեց թագաւորին Արշակունեաց տան շուտով կործանումը, որի ներկայացուցիչն էր Տրդատը, և առնելով նրա ձեռքից սուրը, որ ընծայած էր Բիւզանդիյի Կոստանտին թագաւորից, կախեց օդի մէջ. սուրը շողողաց և անհետացաւ: «Ահա այսպէս կը չքանայ Արշակունիների իշխանութիւնը և ազգատոհմը Հայաստանում, Խոսաց Վրիգորը, և աւելացրեց, թէ Հայաստանը կը խոնարհվի, բայց չի ջնջվի երկրի երեսից, թէ նրան վիճակված է նորից վերածնելութիւն, և թէ մօտաւոր վերածնելութեան նշանը կը լինի այն, որ կրկին կը յայտնվի այդ անհեռացած թագաւորական սուրը: Հայերի մեծ մասը հաւատում են այդ լեզունդայի: Բայց ո՞վ չէ հաւատում նրան,—ամեն ոք հաւատում է, որ Հայաստանին դեռ ևս սպասում է մի փառաւոր ապագայ: Մեր մէջ բնաւորված է մի հաստատ հաւատը—զրոււմ է Ալիշանը,—որ հայոց ժողովրդին վիճակված է խաղալ մի պատուաւոր դեր պատմութեան մէջ, և թէ մեզ սպասում է կատարել մի մեծ առաքելութիւն: Յիշեալ մտածութիւնները թէ յոյսեր լինեն և թէ երեւակայութիւն, բայց դարձեալ դրանք ոչ միայն զոյրութիւն ունեն հայերի մէջ, այլ ժամանակի ընթացքի հետ հեռացնում են զարգանում են և հաստատվում են: Վերջին 50—60 տարիներում հայերը բաւական կենդանութիւն ստացան, կենդանութիւն ստացան ինքնագաղութեամբ, և ոչ երեւակայութեամբ կամ առասպելաբանօրէն, և կենդանացան նրանք, երկու հայկական հիմնարկութիւնների շնորհիւ: Մէկը Սարաւատեան ընկերութիւնը, որ կազմված է Կ. Պոլսի հայերից, որ հոգ են տանում իրանց հայրենակիցների ուսման մասին

զանազան դպրոցներում: Իսկ միւսը, «Միսիթան» միաբանութիւնը» որ միայն կրթական նպատակ ունի, և գտնւում է Վենետիկի ս. Վազարի կղզու վրա: Այդ երկու հիմնարկութիւնները—առաջինը, մասամբ տաճկաց կառավարութեան թմբութեան շնորհիւ, երկրորդը իր անկախ դրութեան յարմարութեամբ—կարող են նպաստել երկրի մտաւոր վերածնելութեանը:

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, շաբաթ օր, տիկին Արտօ և պ. Պաղի լի առաւել են Արթուր թատրոնում դարձեալ մի կօնցէրտ: Այս անգամ կօնցէրտը կը լինի յօգուտ Թիֆլիսի Երաժշտական դպրոցի: Յոյս ունենք, զոնք այս անգամ, մեր հայոց հասարակութիւնը, համակրելով այն դպրոցին, որի մէջ ուսանում են մեծ մասամբ հայ երիտասարդներ և հայ օրիւրդներ, կը շտապի զալ թատրոն: Չարմանալի չէ որ հայոց հասարակութիւնը, որ այդքան սէր ունի դէպի երաժշտութիւն, մինչև այժմ չառքի է այցելել տ. Արտօի կօնցէրտները:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերում մեր ամենեցուն, հայերիս հանրաժանօթ Նարբէյ վարդապետ-բանաստեղծը մի նամակ է գրում Փանսիական հռչակաւոր բանաստեղծ Վիկտոր Հիւգօին, ուր նա խօսում է իր աշխատութիւնների և Հայաստանի մասին: Վիկտոր Հիւգօն մեր բանաստեղծի քրոջ իշխանուհի Լուսինեանի միջնորդութեամբ հասցնում է խորէն Նարբէյի հետեւալ պատասխանը. (այս թարգմանում եմ le «Temps» լրագրից): Փարիզ 18 նոյեմբերի 1879. Իմ ազնիւ համըղայր մինք երկու բանաստեղծներ ենք, և ես կ'աւելացնեմ ևս, երկու քահանայներ. բայց ձեր յատուկութիւնը որպէս բանաստեղծ արդէն բաւական է, և մեր երկուսի ձեռները կարող են սեղմուել: Ձեր նամակը ինձ գրգռում է, ձեր եղբայրասիրութիւնը զարթեցնում է իմ մէջ իմ սեպականը և ես ձեզ շնորհակալ եմ ինչ որ դուք հարցնում էք Հայաստանի վերաբերեալ, դուք այդ ինձանից լաւ գիտէք, բայց ես ինձ բաղդաւոր եմ զգում կարողանալով ձեզ հուսաւորեցնելու դրանում: Այն աղբիւրը, որոնք դէպի անցնալ են նայում պիտի անհետանան, այն աղբիւր, որոնք դիմում են դէպի ապագան՝ պիտի ապրին: Հայաստանը ուրիշ պարսք չունէ. եթէ ոչ, ձեզ հետեւի յառաջագիւղութեան չաղի մէջ, Ես ճանաչում եմ ձեր մտքի վեհութիւնը: Ես չափում եմ ձեր ձակաւորութիւնը, ձեր հոգու մեծութեամբ: Դուք ունէք հին հին ցեղերի արիւնք և նոր ցեղերի հոգի: Ես յաճախ եմ խօսակցում ձեր մասին իշխանուհի Լուսինեանի հետ: Երբ դուք կը գաք Փարիզ, մեր սրտերը իրար կը հանդիպեն և մեր ձեռները կը սեղմվեն: Իմ ազնիւ համըղայր, մնամ ձեզ խորին յարգանքով Վիկտոր Հիւգօ:

Խմբագիր—Նրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷՆԻ

